ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

Ի պատասխան Ձեր 26.08.2024թ. հ. 257-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և ծառայությունների բաժնի աշխատակիցների կողմից իրականացված հսկողության արդյունքում պարզվել է, որ ք. Երևան, Ալ. Մանուկյան փողոց հ.6/5 հասցեում «Թաուն Եվն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սերգեյ Ղազարյանի կողմից ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքը, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը և իրացումն իրականացվել է առանց համապատասխան թույլտվությունների, ինչի համար վերջինիս նկատմամբ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և ծառայությունների բաժնի աշխատակցի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի հատկանիշներով՝ 2024 թվականի փետրվարի 2-ին, հունիսի 4-ին և հուլիսի 17-ին, օգոստոսի 5-ին և սեպտեմբերի 7-ին կազմվել են համապատասխանաբար՝ թիվ Ա-005327, Ա-005328, Ա-005392, Ա-005391, Ա-005398, Ա-005397, Ա-007655, Ա-007654, Ա-008517, Ա-008519 արձանագրությունները: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը տնտեսական գործունեություն կասեցնելու իրավասություն չունի:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ Կենտրոն վարչական շրջանի շրջանի Ա.Մանուկյան փողոց հ.6/5 հասցեում «ԹԱՈՒՆ ԵՎՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Սերգեյ Ղազարյանի կողմից ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը և իրացումն իրականացվել է առանց համապատասխան թույլտվությունների, որի համար վերջինիս նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի համաձայն՝ աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից 2024 թվականի ապրիլի 16-ին կազմվել է համապատասխանաբար հ.006914 և հ.006913 արձանագրությունները:

Վերոհիշյալ հասցեին կից երաժշտական գործիքների օգտագործմամբ՝ խախտվել են Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ին հ.849-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, որի համար Ծառայության կողմից Ընկերության տնօրենի նկատմամբ 2024 թվականի հուլիսի 4-ին և 13-ին Օրենսգրքի 180.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմվել են համապատասխանաբար՝ հ.007767 և հ.008019 արձանագրությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ